1.09.2021
348-10

ՀՀ Սյունիքի մարզպետ
Մելիքսեթ Պողոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Զանգեզուր» հեռուստաընկերության լրագրող Անուշ Միրզոյանը: 2021 թվականի հուլիսի 27-ին լրագրողի ուղարկած ի պատասխան, մարզպետարանը 2021 թվականի օգոստոսի 2-ի պատասխան գրության մեջ նշել է.

«Ինչ վերաբերում է Սյունիքի զարգացման ու ներդրումների հիմնադրամին ՀՀ պետբյուջեից հատկացված 500 մլն դրամին, ապա 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ այդ գումարից

- *39 մլն 701 հազար 500 դրամ ուղղվել է մարզի համայնքների զարգացմանը,*
- *92 մլն 796 հազար 400 դրամ՝ մարզի անվտանգության համակարգի բարելավմանը,*
- *82 մլն 100 հազար դրամ՝ մարզի գյուղատնտեսության խթանմանը,*
- *4 մլն դրամ՝ մարզի արտակարգ իրավիճակների կանխարգելմանը,*
- *12 մլն 782 հազար դրամ՝ մարզում պատերազմից տուժած տնտեսությունների աջակցությանը:*

2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հիմնադրամում տվյալ հատկացման մնացորդը 268 մլն 620 հազար 200 դրամ է»:

2021 թվականի օգոստոսի 16-ին լրագրողը տեղեկություն ստանալու նոր հարցում է ուղարկել՝ խնդրելով մանրամասն ներկայացնել վերոնշյալ 500 մլն դրամով իրականացված/իրականավցող գործողությունների/միջոցառումներն ու դրանց համար նախատեսված ծախսերի բացվածքը:

Օգոստոսի 26-ին ստացված պատասխան գրությամբ Սյունիքի մարզպետարանը չի տրամադրել նոր մանրամասներ՝ նշելով, որ «…գումարի ծախսման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն Ձեր և/կամ այլ լրատվական միջոցների օգնությամբ հանրությանը կտրամադրենք իրականացվող ծրագրերի ավարտից հետո»:

Միաժամանակ Մարզպետարանը չի նշում մերժման որևէ պատճառ և չի ներկայացնում մերժման իրավական հիմքերը, այնինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է՝ *«Գրավոր*

հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»:

Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Ըստ պաշտոնական պատասխանի՝ 39 մլն 701 հազար 500 դրամ գումար ուղղվել է մարզի համայնքների զարգացմանը: Խնդրում ենք հստակեցնել, թե մարզի կոնկրետ որ համայնքների և որ բնակավայրերի զարգացմանն է ուղղվել գումարը: Խնդրում ենք տրամադրել իրականացված միջոցառումների/գործողությունների հաշվետվության բացվածքը:
2. Ըստ պաշտոնական պատասխանի՝ 92 մլն 796 հազար 400 դրամով բարելավել է մարզի անվտանգության համակարգը: Խնդրում ենք նշել, թե կոնկրետ ինչ խնդիրների լուծման նպատակով ինչ միջոցառումներ են իրականացվել, ներկայացնել արձանագրված ադյունքները: Խնդրում ենք տրամադրել իրականացված միջոցառումների/գործողությունների հաշվետվության բացվածքը:
3. Ըստ պաշտոնական պատասխանի՝ 82 մլն 100 հազար դրամը հատկացվել է մարզի գյուղատնտեսության խթանման համար:ը համար եք հատկացել: Խնդրում ենք նշել, թե կոնկրետ ինչ խնդիրների լուծման նպատակով ինչ միջոցառումներ են իրականացվել, ներկայացնել արձանագրված ադյունքները: Խնդրում ենք տրամադրել իրականացված միջոցառումների/գործողությունների հաշվետվության բացվածքը:
4. Ըստ պաշտոնական պատասխանի՝ 4 մլն դրամ է հատկացվել մարզի արտակարգ իրավիճակների կանխարգելմանը: Խնդրում ենք նշել, թե կոնկրետ ինչ խնդիրների լուծման նպատակով ինչ միջոցառումներ են իրականացվել, ներկայացնել արձանագրված ադյունքները: Խնդրում ենք տրամադրել իրականացված միջոցառումների/գործողությունների հաշվետվության բացվածքը:
5. Ըստ պաշտոնական պատասխանի՝ 12 մլն 782 հազար դրամ ուղղվել է մարզում պատերազմից տուժած տնտեսությունների աջակցությանը: Խնդրում ենք հստակեցնել, թե ինչ միջոցառումների միջոցով է իրականավել/իրականավում աջակցությունը, ինչպես են ընտրվում տնտեսվարողներն ու ինչ չափի ֆինանսական աջակցություն են ստացել/ստանալու: Խնդրում ենք նշել, թե կոնկրետ ինչ խնդիրների լուծման նպատակով ինչ միջոցառումներ են իրականացվել, ներկայացնել արձանագրված ադյունքները: Խնդրում ենք տրամադրել իրականացված միջոցառումների/գործողությունների հաշվետվության բացվածքը:
6. Խնդրում ենք նշել, թե ինչպես է նախատեսվում ծախել տվյալ հատկացման մնացորդը *(ըստ պաշտոնական պատասխանի՝ 268 մլն 620 հազար 200 դրամ*): Եթե արդեն իսկ հստակ է՝ նշեք հիմնական ոլորտներն ու ուղղությունները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Լրագրողի հարցումներն ու ստացած պատասխան գրությունները՝ կից:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am